

Մարդկային ռեսուրսների կառավարման
բաժնի վարիչ տիկին Վ. Մինասյանին
Ուսումնամեթոդական վարչության պետ
տիկին Ա. Գևորգյանին

Կարգադրություն

Ելնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ իրավիճակի պայմաններում ուսումնական պարապմունքների դադարեցման հետևանքով կրթական գործընթացի կարգավորման առաջնահերթությունից՝ Համալսարանում գործող «Ներքին կարգապահական կանոններ»-ի, ՄԿԾ-ների ուսումնական պլանների ժամանակացույցների 2019-2020 ուսումնական տարվա 1-ին (հեռակա ուսուցման) և 2-րդ կիսամյակի (առկա ուսուցման) ժամանակացույցների մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարժարանի, քոլեջի, համալսարանի ուսումնական գործընթացները (բացի 2-րդ, 3-րդ, 8-րդ կետերում ամրագրվածներից) դադարեցնել մինչև 2020թ. ապրիլի 14-ի ժամը 17⁰⁰-ը:

2. Մագիստրատուրայի մագիստրոսական ատենախոսության նախապատրաստման ժամանակացույցը համարել մարտի 16-ից սկսված (առկա ուսուցում, 4 շաբաթ):

3. Բակալավրիատի ավարտական աշխատանքներին հատկացված 2-րդ շաբաթը համարել մարտի 16-ից մարտի 27-ը ներառյալ:

4. Առկա ուսուցման համակարգի ընթացիկ քննությունները 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում չկազմակերպել:

4.1. Քննական դասընթացները ամփոփել հանրագումարային քննությամբ:

4.2. Քննությունները կազմակերպել բանավոր, գրավոր, թեստավորմամբ՝ ըստ դասընթացների առանձնահատկությունների և ուսանողների համաձայնության:

4.3. Ընթացիկ քննություններին հատկացված մեկ շաբաթը հատկացնել տեսական դասընթացներին՝ ըստ կրթական ծրագրերի:

4.4. Առկա ուսուցման համակարգի 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանը կազմակերպել հունիսի 22-ից հուլիս 4-ը ներառյալ՝ գերբեռնված դեպքերում թույլատրելով մեկ քննությունը կազմակերպել նախորդող շաբաթում:

4.5. Առկա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակն ավարտել հուլիսի 4-ին (բակալավրիատ, մագիստրատուրա)

5. Հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի քննական շրջանը կազմակերպել 2020թ. ապրիլի 15-ից մայիսի 2-ը ներառյալ, պարտքերի մարման 1-ին շրջանը՝ մայիսի 11-15-ը, 2-րդ շրջանը՝ հունիսի 8-12-ը:

5.1. Հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի ընդհատված պրակտիկաները շարունակել մայիսի 4-ից՝ առանձին դեպքերում (մանկավարժական պրակտիկա) համադրելով պարտքերի մարման շրջանի հետ:

5.2. Հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի տեսական դասընթացները կազմակերպել հունիսի 15-ից հուլիսի 4-ը ներառյալ՝ օգտագործելով հունիսի 20-ը, 27-ը և հուլիսի 4-ը:

6. Վերակառուցել դասացուցակները՝ օգտագործելով նաև շաբաթ օրերը (ապրիլի 18, 25, մայիսի 2, 9, 16, 23, 30, հունիսի 6, 13):

7. Ակադեմիական ցածր առաջադիմությամբ, ըստ կարգի (մինչև 12 կրեդիտ) հաջորդ կիսամյակ տեղափոխված ուսանողների քննական ժամանակացույցը փոփոխել՝ համաձայն իրենց դիմումի:

8. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի սեմինարը կազմակերպել առցանց:

9. Առանձին դեպքերում ուսանողի համաձայնությամբ «Moodle» հեռավար ուսուցման համակարգով կազմակերպել ուսուցում՝ համաձայն դասախոսի հայտի գրանցման:

10. Հանձնարարել «Moodle» հեռավար ուսուցման համակարգի ադմինիստրատորին կազմել համապատասխան ժամանակացույց՝ համակարգի հնարավորությունները առավել օպտիմալ օգտագործելու համար:

11. Վավերացնել համապատասխան հրամաններով:

Ռեկտորի
Ս.Թումանյան

Ժամանակավոր

պաշտոնակատար՝

18.03.2020թ.